**Արձանագրություն N 2**

**Երևանի քաղաքապետարանի կարիքների համար գրասենյակային ապրանքների ձեռքբերման**

**«ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/6» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի**

**Протокол № 2**

**Заседание комиссии по процедуре закупки с кодом ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/6" для нужд мэрии города Ереван по покупка канцелярских товаров**

Ք. Երևան

Г. Ереван

Նիստի անցկացման վայրը՝

Երևանի քաղաքապետարանի վարչական շենք (ք. Երևան, Արգիշտիի փողոց 1), 128 սենյակ

օրը՝ 03.12.2025թ.

ժամը՝ 15:00

Место проведения заседания.

Административное здание мэрии Еревана (г. Ереван ул. Аргишти 1), комната 128

день: 03.12.2025

время: 15:00

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Ս. Մելքոնյան |
| Հանձնաժողովի անդամներ՝ | Հ. Խաչատրյան, Ա. Ավետիսյան |
| Հանձնաժողովի քարտուղար ՝ | Է. Քեղինյան |

Участвовали

| | |
|---|---|
| Председатель комиссии: | С. Мелконян |
| Члены комиссии: | Г. Хачатрян, А. Аветисян |
| Секретарь комисии: | Э. Кегинян |

**1. «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/6» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում 02.12.2025թ. ստացված հարցման և 03.12.2025թ. դրա վերաբերյալ պարզաբանում տրամադրելու մասին**

**О запросе, полученном 02.12.2025 г., и предоставлении разъяснений по нему 03.12.2025 г. в рамках процедуры закупки с кодом « ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/6»**

---------------------------------------------------------------------------

(Ս. Մելքոնյան, С. Мелконян)

1.1 Ընդունել ի գիտություն, որ 02.12.2025թ. էլեկտրոնային աճուրդի eauction.armeps.am էլեկտրոնային հարթակում «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/6» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում ստացվել է հարցում, որին ի պատասխան գնահատող հանձնաժողովի կողմից տրվել է պարզաբանում 03.12.2025թ.-ին: Ստորև ներկայացվում է հարցումների և պարզաբանումների վերաբերյալ տեղեկատվությունը:

**Հարցադրում 1.**

«Հարգելի պատվիրատու, Խնդրում ենք պարզաբանել մրցույթի 1-ին չափաբաժնի՝ A4 ֆորմատի թղթի տեխնիկական պահանջները: Մասնավորապես, մրցույթի փաստաթղթերում նշված է, որ թղթի պայծառությունը պետք է լինի առնվազն 109%, իսկ սպիտակությունը՝ 170 CIE: Ցանկանում ենք նշել, որ A+ դասի թղթի պայծառությունը սկսվում է 100%-ից, իսկ սպիտակությունը՝ 165 CIE-ից, և այդ տարբերությունները անզեն աչքով տեսանելի չեն, ինչպես նաև չեն ազդում արտադրանքի տեսքի կամ օգտագործման որակի վրա: Բացի այդ, նշենք, որ պայծառության ցուցանիշը դիտվում է որպես օժանդակ պարամետր, և մի շարք արտադրողների մոտ այն պարտադիր կերպով չի ներառվում տեխնիկական բնութագրերում: Արտադրողների համար որակական հիմնական ցուցանիշներ են համարվում թղթի խտությունը, հաստությունը, սպիտակությունը և անթափանցելիությունը, որոնք պարտադիր կերպով ներկայացվում են արտադրողների տեխնիկական բնութագրերում: Հաշվի առնելով

վերոգրյալը՝ խնդրում ենք թույլատրել մասնակցել մրցույթին այնպիսի թղթերով, որի տեխնիկական բնութագրում պայծառությունը նշված չէ կամ նշված է 100%, ինչը համահունչ է A+ դասի միջազգային ցուցանիշներին և լիովին ապահովում է պահանջվող որակը: Մյուս բոլոր պարամետրերով այն լիովին համապատասխանում է մրցույթի պահանջներին: Վստահ ենք, որ տվյալ պարամետրի ճշգրտումը հնարավորություն կտա ապահովել արդար մրցակցություն և ձեռք բերել բարձրորակ թուղթ առավել մատչելի գնով»

**Запрос 1:**

«Уважаемый заказчик! Просим разъяснить технические требования к первому лоту тендера – бумаге формата А4. В частности, в тендерной документации указано, что яркость бумаги должна быть не менее 109%, а белизна – 170 CIE. Обращаем ваше внимание, что яркость бумаги класса А+ начинается от 100%, а белизна – от 165 CIE, и эти различия не видны невооруженным глазом и не влияют на внешний вид или качество использования продукта. Кроме того, отмечаем, что показатель яркости считается вспомогательным параметром и для ряда производителей не обязательно включается в технические характеристики. Для производителей основными качественными показателями являются плотность, толщина, белизна и непрозрачность бумаги, которые в обязательном порядке представлены в технических характеристиках производителей. Учитывая вышеизложенное, просим вас разрешить участие в конкурсе бумагам, в технических характеристиках которых яркость не указана или указана 100%, что соответствует международным показателям класса А+ и полностью обеспечивает требуемое качество. По всем остальным параметрам он полностью соответствует требованиям конкурса. Мы уверены, что корректировка этого параметра позволит обеспечить честную конкуренцию и предоставить высококачественную бумагу по более доступной цене»

**Պարզաբանում 1.**

«Հարգելի մասնակից խնդրում ենք առաջնորդվել տեխնիկական բնութագրում նշված պարամետրերով»

**Разъяснение 1.**

«Уважаемый поставщик, пожалуйста, руководствуйтесь параметрами, указанными в технических характеристиках»

*1.2 Հաստատել հրավերի պարզաբանման մասին հայտարարության տեքստը:*
*1.2 Утвердить текст объявления о разъяснении приглашения.*
*Ընդունվել է որոշում՝ կողմ – 3, դեմ - 0:*
*Принято решение: за – 3, против – 0.*

Հանձնաժողովի նախագահ՝ ________________ Ս.Մելքոնյան
Председатель комиссии С. Мелконян

Հանձնաժողովի անդամներ՝ ________________ Հ. Խաչատրյան
Члены комиссии Г. Хачатрян

________________ Ա. Ավետիսյան
А. Аветисян

Քարտուղար՝ ________________ Է. Քեղինյան
Секретарь комиссии Э. Кегинян